2021

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԶԵԿՈՒՅՑ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԻՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը (այսուհետ՝ ՀՖԿՍՊԻ)՝ նպատակ ունենալով շարունակաբար բարելավել կրթության որակն ու մատուցվող կրթական ծառայությունները, կարևորում է բուհի շրջանավարտների կարծիքի ուսումնասիրումը վերը նշված գործընթացի արդյունավետ իրականացման համար:

Այս համատեքստում ՀՖԿՍՊԻ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցումները հանդիսանում են ՀՖԿՍՊԻ որակի ապահովման ներքին համակարգի կարևորագույն բաղադրիչներից մեկը: Շրջանավարտների հարցումներն իրականացվում են ինստիտուտի գործունեության տարբեր տիրույթների որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ մշակելու և իրականացնելու նպատակով. շրջանավարտների կողմից իրականացվող անկախ գնահատումները թույլ են տալիս շարունակաբար բարձրացնել ուսումնական գործընթացի որակը, վերհանել պրոֆեսորադասախոսական կազմի գործառնության դրական և բացասական միտումները, առանձնացնել ուսումնառության ուժեղ և թույլ կողմերը տարբեր տեսանկյուններից և ժամանակին արձագանքել մի շարք ուսումնական հիմնախնդիրներին, որոնք առաջանում են կրթական գործընթացների շրջանակներում:

Որպես հետազոտության օբյեկտ՝ հանդես են գալիս բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտները, ովքեր մասնակցում են հարցմանը ավարտական ուսումնական տարվա վերջում՝ ամփոփիչ ատեստավորումից հետո (հունիս-հուլիս ամիսներին): Սույն մոտեցումը թույլ է տալիս ստանալ առավել օբյեկտիվ գնահատականներ՝ կապված նաև այն հանգամանքի հետ, որ հարցմանը մասնակցում են այն շրջանավարտները, ովքեր ուսումնասիրել են կոնկրետ ծրագրով նախատեսված գիտելիքների ամբողջական փաթեթը (համապատասխանաբար՝ բակալավրի կամ մագիստրոսի կրթական աստիճանի):

Հետազոտությունն անցկացվել հարցաթերթիկային և առցանց հարցման միջոցով (Հավելված 1): Հարցմանը շրջանավարտները մասնակցել են անանունության սկզբունքով:

Շրջանավարտները նաև տվել են իրենց ստացած կրթության ընդհանուր գնահատականները: Բացի այդ, հաշվի են առնվել շրջանավարտների առաջարկները կրթական գործընթացի բարելավման վերաբերյալ «բաց հարցի» մեթոդական տեխնիկայի միջոցով (այսինքն՝ հարցվողներին հնարավորություն է տրվել ազատ շարադրանքով ներկայացնել իրենց կարծիքը):

Այս համատեքստում ՀՖԿՍՊԻ շրջանավարտները գնահատում են իրենց բավարարվածությունը ստացած տեսական գիտելիքներից և գործնական հմտություններից, մասնագիտական կարողություններից, օտար լեզուների իմացությունից, հաճախած դասընթացների օգտակարությունից, գիտելիքների գնահատման օբյեկտիվությունից, ներքին և միջազգային շարժունության ծրագրերի հնարավորություններից:

Շրջանավարտների կողմից գնահատվել են նաև ՀՖԿՍՊԻ ուսումնառության ռեսուրսները և օժանդակ ծառայությունները (բավարարվածությունը լսարանային պայմաններից, լաբորատորիաների կահավորանքից, համակարգչային սրահներից, համացանցի մատչելիությունից):

Անցկացված ուսումնասիրությունը հնարավորություն է տվել վերհանել կրթական գործընթացի այն ոլորտները, որոնք առավել գոհունակության են արժանացել, ինչպես նաև մի շարք կրթական հիմնախնդիրներ այդ ոլորտներում, բնութագրել տարբեր կրթական աստիճանների, ուսուցման ձևերի շրջանակներում կրթական գործընթացի առանձնահատկությունները: Հետազոտությունը թույլ է տվել համադրել ՀՖԿՍՊԻ երկու ֆակուլտետների ուսումնական գործընթացի թույլ և ուժեղ կողմերը, այդ ֆակուլտետներում կրթական գործընթացների՝ շրջանավարտների կողմից ընկալումների առանձնահատկությունները:

Հարցմանը մասնակցած շրջանավարտների ընդհանուր նկարագիրը

ՀՖԿՍՊԻ Որակի ապահովման բաժնի կողմից իրականացված հարցմանը մասնակցել է 373 շրջանավարտների (շրջանավարտների ընդհանուր թվի 60%-ը). *վերջինս լիովին բավարար ցուցանիշ է 95% վստահության միջակայքի և 5% սխալի սահմանի պայմաններում եզրահանգումներ կատարելու ՀՖԿՍՊԻ ներկայիս շրջանավարտների տված գնահատականների մասին:*

Հարցմանը մասնակցել են Առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետի 89 և Մարզչամանկավարժական ֆակուլտետի 283 շրջանավարտ (1 հոգի չի նշել ֆակուլտետը):

Հարցմանը մասնակցել են ՀՖԿՍՊԻ բակալավրիատի առկա ուսուցման ձևի 279 շրջանավարտներից՝ 177-ը, բակալավրիատի հեռակա ուսուցման ձևի 256 շրջանավարտներից՝ 121-ը, իսկ մագիստրատուրայի 87 շրջանավարտներից՝ 73-ը:

Աղյուսակ 1. Հարցվողների թվի բաշխումը՝ ըստ մասնագիտության կրթական ծրագրերի և ուսուցման ձևի:

Ուսուցման համակարգը	Մասնագիտական մանկավարժություն		Կինեզիոլոգիա		Հոգեբանություն		Լրագրություն		Մենեջմենթ /մարքեթինգ		*Ընդամենը*	
	շրջանավարտ	*մասնակից*	*շրջանավարտ*	*մասնակից*	*շրջանավարտ*	*մասնակից*	*շրջանավարտ*	*մասնակից*	*շրջանավարտ*	*մասնակից*	*շրջանավարտ*	*Մասնակից*
Բակալավրիատ - առկա	235	156	33	13	-	-	11	8	-	-	279	**177**
Բակալավրիատ - հեռակա	228	107	23	14	-	-	5	-	-	-	256	**121**
Մագիստրատուրա	30	29	32	21	5	4	2	2	18	16	87	**73**
Ընդամենը	**493**	**292**	**88**	**48**	**5**	**4**	**18**	**10**	**18**	**16**	**622**	**373**[1]

[1] 2 հարցմանը մասնակից չի նշել ուսուցման համակարգը, իսկ 3-ը՝ մասնագիտությունը:

Հարցվողների սեռը

Գծապատկեր 1.



Ի՞նչ որակավորում եք ստացել ՀՖԿՍՊԻ-ում:

Գծապատկեր 2.



2020-2021 ուսումնական տարվա ՀՖԿՍՊԻ շրջանավարտների գերակշիռ մասը մանկավարժ-մարզիչներ են (493 շրջանավարտ, կամ՝ 79%): «Կինեզիոլոգիա» մասնագիտությամբ կան 88 շրջանավարտներ (13%): Շատ ավելի սակավաթիվ են մարզական լրագրողները (18 շրջանավարտ, կամ՝ 3%), սպորտի մենեջմենթի/մարքեթինգի մագիստրոսական ծրագրի շրջանավարտները (16 շրջանավարտ, կամ՝ 2,6%) և սպորտային հոգեբանները (5 շրջանավարտ, կամ՝ 0,8%):

Գծապատկեր 3-ում երևում են ՀՖԿՍՊԻ-ի և նշված սպորտային մասնագիտության ընտրության շարժառիթները բուհի այս տարվա շրջանավարտների մոտ:

Ինչու՞ եք ընտրել այս բուհը և մասնագիտությունը

Գծապատկեր 3.



Նշում. տոկոսների հանրագումարն անցնում է 100%-ից, քանի որ այս հարցին տրվել է մեկից ավելի պատասխան:

Վերը պատկերված շարժառիթների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ՀՖԿՍՊԻ-ի՝ որպես բուհի ընտրության հիմնական դրդապատճառը եղել է այն, որ երիտասարդները ցանկացել են ստանալ սպորտի և ֆիզիկական կուլտուրայի ոլորտում բարձրագույն կրթություն հանրապետության միակ բուհում, որն առաջարկում է իրենց հետաքրքրող կրթական ծրագրեր: Տվյալ կրթությունը շատերի համար նաև հանդես է գալիս որպես երաշխիք, որը ՀՖԿՍՊԻ-ն ավարտելուց հետո վերջինս նրանց կօգնի աշխատանքի անցնել սպորտի և ֆիզիկական կուլտուրայի ոլորտում: Հարցվածները նշել են նաև մի շարք այլ դրդապատճառներ, որոնք սակայն ավելի ցածր տոկոս են կազմում ընդհանուրի մեջ:

Ինչպե՞ս կգնահատեիք ՀՖԿՍՊԻ-ում առաջարկվող դասընթացների օգտակարությունը մասնագիտական գործունեության մեջ

Գծապատկեր 4.



ՀՖԿՍՊԻ-ում առաջարկվող դասընթացների օգտակարությունը մասնագիտական գործունեության մեջ «գերազանց» է գնահատել շրջանավարտների 35%-ը, «լավ»՝ 44%-ը, «բավարար»՝ 17%-ը, իսկ «անբավարար»՝ 4%-ը: Գծապատկեր 3-ում երևում է, որ այս հարցի վերաբերյալ առավել դրական պատասխաններ են ստացվել «մենեջմենթ/մարքեթինգ» և «սպորտային հոգեբանություն» մասնագիտությունները ընտրած ուսանողների կողմից («գերազանց» կամ «լավ» են գնահատել նրանց 94%-ը և 100%-ը համապատասխանաբար), իսկ առավել բացասական պատասխաններ՝ լրագրողների և կինեզիոլոգների կողմից («բավարար» կամ «անբավարար» են գնահատել համապատասխանաբար նրանց 45%-ը և 27%-ը):

Արդյո՞ք ինստիտուտում ուսումնառությունը նպաստում է մասնագիտական կարողությունների և գործնական հմտությունների ձեռքբերմանը

Գծապատկեր 5.



Չնայած հարցված շրջանավարտների 52%-ը այն կարծիքին է, որ ինստիտուտում ուսումնառությունը մեծապես/շատ նպաստում է իրենց մասնագիտական կարողությունների և գործնական հմտությունների ձեռքբերմանը, քիչ չէ այն շրջանավարտների մասնաբաժինը (31%), որոնք համարում են, որ ՀՖԿՍՊԻ-ում ուսումնառությունը «որոշ չափով» է նպաստում մասնագիտական կարողությունների և գործնական հմտությունների ձեռքբերմանը, կամ՝ ընդհանրապես չի նպաստում (4%): Վերջինս ցույց է տալիս, որ մասնագիտական կարողությունների և գործնական հմտությունների ձեռքբերմանը նպաստող այլ հանգամանքներ ևս կան, ինչպիսիք են, օրինակ՝ մասնագիտական պրակտիկան, ինքնակրթությունը, ինչպես նաև վերապատրաստման այլ եղանակները, որոնց մասին ուսանողների/շրջանավարտների կարծիքներն են ուսումնասիրվել ՈԱԲ-ի կողմից վերջերս իրականացված այլ հարցումներում:

Ինչպիսի՞ մասնագիտական կարողություններ և գործնական հմտություններ եք ձեռք բերել ՀՖԿՍՊԻ-ում ստացած կրթության արդյունքում

Այս հարցի վերաբերյալ շրջանավարտներից ստացվել են բազմազան պատասխաններ (բոլորը ներկայացված են մեջբերումների տեսքով ստորև նշված կետերում), որոնց մեջ գերակշռում են այն կարծիքները, ըստ որի բուհում սովորելու ընթացքում նրանք ձեռք են բերել մի շարք օգտակար մասնագիտական հմտություններ և գիտելիքներ, ծանոթացել են իրենց հարազատ մարզաձևերին, հմտացել են մարզչական եւ մանկավարժական գործում, ստացել են հոգեբանական, լրագրության, կամ մարքեթինգի գիտելիքներ և այլն:

- ✓ Ձեռք եմ բերել /բավարար/ մասնագիտական գիտելիքներ և հմտություններ /12/
- ✓ Որպես մարզիչ և մանկավարժ /4/
- ✓ Աշակերտ-մարզիչ շփման հմտության ձեռք բերում /3/
- ✓ Բոլոր մարզաձևերը խորացված ուսումնասիրեցի /2/
- ✓ Ավագ և ավելի երիտասարդ սերնդի հետ սպորտային ճիշտ վարժաձևեր և մարզումներ մասնագիտական տեսակետից, ինչպես նաև մասնագիտության մեջ ավելի խորացում, որով կարող ենք մեր փորձով ու հմտությամբ առաջ տանել կամ օգնել ոլորտի զարգացմանը /2/
- ✓ Կատարելագործել եղած գիտելիքները /2/
- ✓ Հմտացել եմ մարզչական և մանկավարժական գործում /2/
- ✓ Երեխաների հետ աշխատելու փորձ եմ ձեռք բերել թե՛ դպրոցում, և թե՛ մարզադաշտում /2/
- ✓ Ֆիզկուլտուրայի դասի անցկացման կարողություններ /2/
- ✓ Առաջինը սովորել եմ գնահատել ժամանակը, ինչը համարում եմ շատ կարևոր
- ✓ Ավելի ճիշտ և ուշադիր կազմակերպել սեփական մարզման գործընթացը, մշակել ճիշտ ռեժիմ:
- ✓ Բուհում սովորելու ընթացքում ուսանողները հիմնականում ստանում են գիտելիքների և փորձառության այնպիսի մակարդակ,որը զգալիորեն զիջում է աշխատաշուկայի պահանջներին
- ✓ Գործնական հմտությունները հիմնականում ձեռք ենք բերել պրակտիկաների ընթացքում, քանի որ բուհը չուներ համապատասխան սարքավորումներ: Ինստիտուտում սովորել ենք գրել՝ որպես լրագրող, ինչը շատ կարևոր է մեր մասնագիտական առաջխաղացման համար: Ուսումնասիրել ենք ոչ մասնագիտական առարկաներ, որոնք ընդհանուր զարգացման համար շատ կարեւոր են
- ✓ Կինեզիոլոգի մասնագիտական հմտություններ
- ✓ Հոգեբանական գիտելիքներ /2/
- ✓ Մարզական տեխնիկա
- ✓ Ձեռք բերեցի մասնագիտական հմտություններ, արդեն աշխատում եմ մասնագիտությամբ, ինչը մեծ արդյունք է
- ✓ Ձեռք եմ բերել սպորտային կառավարչի կարողություններ/հմտություններ /2/
- ✓ Մասնագիտական տեսական գիտելիքներ, գործնական՝ քիչ գիտելիքներ

- ✓ Մասնագիտության խորը ուսումնասիրում
- ✓ Մարզական հմտություններ և հոգեբանական գիտելիքներ
- ✓ Ունեցել եմ հնարավորություն երեխաների հետ աշխատելու և ձեռք եմ բերել մասնագիտական հմտություններ
- ✓ Պրակտիկ գործունեության
- ✓ Սովորելու ընթացքում ձեռք եմ բերել գրելու,շփվելու և գիտելիքներս կիսելու հմտություն
- ✓ Ստացել եմ բարձր մակարդակի գիտելիքներ
- ✓ Ստացել եմ սպորտի հոգեբանության ոլորտում մասնագիտական բացառիկ տեսական և գործնական գիտելիքներ, հմտություններ, աշխատել եմ մարզիչների, մարզիկների, հոգեբանների հետ: Ձեռք եմ բերել սպորտում հոգեբանական ախտորոշման գիտելիքներ: Ստացած գիտելիքներիս և փորձի շնորհիվ ինձ համար ստեղծվել է բացառիկ հնարավորություն այս բնագավառում իմ գործունեությունը սկսելու և զարգացնելու համար
- ✓ Տարբեր առողջական խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատելու կարողություններ
- ✓ Փրկարարի հոգեբանական ապահովման միջոցները և ձևերը
- ✓ Օգնում է իմ աշխատանքում ուսումնասիրել գրականություն, ծանոթանալ նորություններին և նորարար մեթոդներին, ավելի հմուտ աշխատել պատանիների հետ

Արդյո՞ք մասնագիտական կրթական ծրագիրը հագեցված էր մասնագիտական դասընթացներով:

Գծապատկեր 6.



Չնայած հարցվածների 54%-ը նշել է, որ բուհում իրենց մասնագիտական կրթական ծրագիրը շատ/մեծապես հագեցված է եղել մասնագիտական դասընթացներով, 33%-ը նշել է, որ այդ ծրագիրը *որոշ չափով* է հագեցած եղել, իսկ 3%-ը՝ *հագեցված չի եղել* մասնագիտական դասընթացներով:

Հետևյալ հարցով փորձել ենք պարզել, թե որոնք են եղել մասնագիտական դասընթացներով թերի հագեցվածության պատճառները:

Եթե ձեր մասնագիտական կրթական ծրագիրը հագեցված չէր մասնագիտական դասընթացներով, կամ որոշ չափով էր հագեցած, ապա ի՞նչն էր բացակայում:

- ✓ Գործնական/պրակտիկ դասերը, գործնական աշխատանքը /10/
- ✓ Պրակտիկան ավելի երկար պետք է լիներ /2/
- ✓ Պրակտիկայի վրա է շեշտը պետք դնել
- ✓ Պրակտիկան, որն ավելի կարևոր է. ուսանողը պետք է ավարտի արդեն իսկ մասնագիտական փորձով
- ✓ Մասնագիտական առարկաների ժամերի քիչ լինելը /3/
- ✓ Գրականության բացակայություն, տված նյութն էլ թերի էր
- ✓ Խորը մասնագիտական գրականությունը և տեսությունը
- ✓ Կարծում եմ հնարավորություն կա էլ ավելի խորը մասնագիտական առարկաներ ներդնելու
- ✓ Մասնագիտական դասերը և հենց մասնագետները
- ✓ Նորությունները քիչ էին
- ✓ Ավելի շատ ոչ սպորտային առարկաներ ենք սովորել: Շատ ավելի լավ կլիներ, որ ուսանողները ավելի մանրակրկիտ ուսումնասիրեին սպորտը:

Այսպիսով, պարզ է դառնում, որ գործնական աշխատանքները/դասերը/սեմինարները և համապատասխան մասնագիտական պրակտիկան են հիմնականում թերի եղել ներկայիս շրջանավարտների մոտ, ոմանք էլ գանգատվել են մասնագիտական առարկաների ժամաքանակի, ինչպես նաև մասնագիտական գրականության պակասից:

Արդյո՞ք Ձեզ դասավանդող դասախոսներն արհեստավարժ էին

Գծապատկեր 7.



Հարցված բոլոր 4 սպորտային հոգեբանները (100%), մենեջմենթ/մարքեթինգ մասնագիտությամբ հարցված շրջանավարտների 93%-ը, մարզիչ մասնագիտությամբ շրջանավարտների 83%-ը, սպորտային մանկավարժություն մասնագիտությամբ շրջանավարտների 78%-ը *շատ արհեստավարժ* են համարում իրենց դասավանդած դասախոսներին:

«Կինեզիոլոգիա» և «մարզական լրագրություն» մասնագիտություններով համեմատաբար քիչ շրջանավարտներ են համարում, որ իրենց դասավանդած դասախոսները *շատ արհեստավարժ* են եղել (63% և 45% համապատասխանաբար): Այս փաստը պետք է մտահոգի բուհի վարչակազմին/ղեկավարությանը՝ նշված մասնագիտությունների ամբիոնները առավել արհեստավարժ պրոֆեսորադասախոսական կազմով համալրելու համար:

ՀՖԿՍՊԻ-ում ստացած գիտելիքները բավարա՞ր են այն ավարտելուց հետո համապատասխան գործատուի մոտ ըստ մասնագիտության աշխատանքի անցնելու համար:

Գծապատկեր 8.



Հարկ է նկատել, որ ՀՖԿՍՊԻ 2020-2021թթ. ուստարվա շրջանավարտների 48%-ը՝ բուհում ստացած գիտելիքները *լիովին բավարար*, 38%-ը՝ *որոշ չափով բավարար* են համարում, իսկ 9%-ը՝ *բոլորովին բավարար* չի համարում բուհն ավարտելուց հետո համապատասխան գործատուի մոտ մասնագիտական աշխատանքի անցնելու համար: Մինչդեռ մարզիչ-մանկավարժներն առավել վստահ են ՀՖԿՍՊԻ-ում ստացած գիտելիքներով աշխատանք գտնելու հարցում, կինեզիոլոգների միայն 19%-ը, մենեջմենթ/մարքեթինգ կրթական ծրագրերի շրջանավարտների 20%-ը և մարզական լրագրողների 36%-ն է բուհում ստացած գիտելիքները *լիովին բավարար* համարում ինստիտուտը ավարտելուց հետո համապատասխան գործատուի մոտ մասնագիտական աշխատանքի անցնելու համար: Վերջինիս հնարավոր պատճառներ կարող են լինել նշված մասնագիտություններով շրջանավարտների մոտ պրակտիկ մասնագիտական գիտելիքների և հմտությունների, ինչպես նաև համապատասխան աշխատատեղերի պակասը:

Արդյո՞ք համապատասխան գործատուի մոտ աշխատելու համար լրացուցիչ վերապատրաստման կարիք ունեք

Գծապատկեր 9.



Ինչպես երևում է պատասխաններից, ՀՖԿՍՊԻ 2020-2021թթ. ուստարվա շրջանավարտների գրեթե 67%-ը համարում է, որ բուհն ավարտելուց հետո համապատասխան գործատուի մոտ աշխատելու համար <u>լրացուցիչ վերապատրաստման կարիք ունի:</u> Ավելի բարձ տոկոս են կազմում բուհն ավարտող այն լրագրողները, կինեզիոլոգներն ու մենեջմենթ/մարքեթինգ մասնագիտությամբ շրջանավարտները, որոնք կիսում են այդ կարծիքը (համապատասխանաբար՝ 100%, 96% և 81%): Ինչպես նախորդ հարցում նշվեց, <u>մարզիչ-մանկավարժներն առավել վստահ են ՀՖԿՍՊԻ-ում ստացած գիտելիքներով աշխատանք գտնելու հարցում</u>:

Որքանո՞վ է արդյունավետ ինստիտուտում օտար լեզուների ուսուցումը

Գծապատկեր 10.



ՀՖԿՍՊԻ-ում օտար լեզուների՝ անգլերենի և ռուսերենի ուսուցումը *շատ արդյունավետ* են համարում այս տարվա շրջանավարտների 33%-ը, *արդյունավետ՝ 22%-ը, միջին արդյունավետության՝* 22%-ը, *քիչ արդյունավետ՝* 17%-ը, և *բոլորովին ոչ արդյունավետ՝* 6%-ը:

1-ից 5 բալանոց սանդղակով արդյունավետության միջին ցուցանիշը 3,6 է, այսինքն՝ միջինից-լավ:

ՈԱԲ-ի կողմից ՀՖԿՍՊԻ 1-ին կուրսի ուսանողների շրջանում վերջերս կատարված հետազոտությունը ցույց տվեց, որ առաջին կուրսում օտար լեզուների ուսուցման ուղղությամբ բավականին մեծ հաջողություններ են արձանագրվել 2020-2021թթ. ուստարում, սակայն սա պետք է շարունակական լինի և ընդգրկի նաև ՀՖԿՍՊԻ 2-րդ, հնարավորության դեպքում՝ նաև մյուս կուրսերը:

Ինչպե՞ս եք գնահատում ԲՈՒՀ-ում կրթության մեջ ժամանակակից տեխնիկական ռեսուրսներով (օրինակ՝ ինտերակտիվ լսարաններով) ապահովվածության մակարդակը

Գծապատկեր 11.



ՀՖԿՍՊԻ-ում կրթության մեջ ժամանակակից տեխնիկական ռեսուրսներով (օրինակ՝ ինտերակտիվ լսարաններով) ապահովվածության մակարդակը *գերազանց* են գնահատել հարցված շրջանավարտների 23%-ը, *լավ*՝ 44%-ը, *բավարար*՝ 24%-ը և *անբավարար*՝ 9%-ը:

Ընդհանուր առմամբ, ինչպե՞ս եք գնահատում ՀՖԿՍՊԻ-ում Ձեր ստացած կրթությունը

Գծապատկեր 12.



Ընդհանուր առմամբ, ՀՖԿՍՊԻ-ում ստացած իրենց կրթությունը «գերազանց» են համարում շրջանավարտների 25%-ը, «լավ»՝ 55%-ը, «բավարար»՝ 17%-ը և «անբավարար»՝ 2%-ը: ՀՖԿՍՊԻ-ում ստացած կրթությունից առավել դժգոհ են կինեզիոլոգներն ու լրագրողները (հարց, որը հետագա ուսումնասիրման և լուծման կարիք ունի):

Ինչպե՞ս եք գնահատում արտերկրում կրթությունը շարունակելու ՀՖԿՍՊԻ տրամադրած հնարավորությունները (միջազգային շարժունության ծրագրերի իրականացում):

Գծապատկեր 13.



Արտերկրում կրթությունը շարունակելու բուհի տրամադրած հնարավորությունները (միջազգային շարժունության ծրագրերի իրականացում) *գերազանց* են գնահատել հարցված շրջանավարտների 22%-ը, *լավ*՝ 43%-ը, *բավարար*՝ 19%-ը և *անբավարար*՝ 16%-ը:

Արդյո՞ք ուսանողների գիտելիքներն օբյեկտիվ են գնահատվում ՀՖԿՍՊԻ-ում

Գծապատկեր 14.



Վերը պատկերված գծապատկերից երևում է, որ շրջանավարտների մեծ մասը՝ 70%-ը, հիմնականում օբյեկտիվ է համարում բուհում գործող ուսանողների գիտելիքների գնահատման համակարգը: Նրանց 24%-ը կարծում է, որ ուսանողների գիտելիքները երբեմն օբյեկտիվ են գնահատվում, երբեմն՝ ոչ, իսկ 5%-ն էլ համարում է, որ երբեք օբյեկտիվ չեն գնահատվում ուսանողների գիտելիքները: Այդպիսի կարծիք հայտնողները (ոչ միշտ օբյեկտիվ գնահատման մասին) առավել մեծ տոկոս են կազմում կինեզիոլոգիայի և մարզական լրագրության խմբերում:

Ինչպիսի՞ն է ծածկագրված գրավոր քննությունների համակարգը:

Գծապատկեր 15.



Նշում. տոկոսների հանրագումարն անցնում է 100%-ից, քանի որ այս հարցին տրվել է մեկից ավելի պատասխան:

Ծածկագրված գրավոր քննությունների համակարգը օբյեկտիվ ու թափանցիկ է համարում շրջանավարտների 28%-ը, սովորելու համար մոտիվացնող՝ 27%-ը, անաչառ գնահատմանը նպաստող՝ 26%-ը: Հարցվածների 31%-ը գտնում է, որ ծածկագրված գրավոր քննությունների համակարգը քիչ ազդեցություն է ունենում կրթության որակի վրա: «Այլ պատասխաններ»-ում նշվել են հետևյալ կարծիքները.

- *Արտագրությունները շատ են /7 պատասխան, կամ՝ 2%/*
- *Ծածկագրված գրավոր քննությունների համակարգը չի արդարացնում սպասելիքները /4 պատ. կամ՝ 1%/*
- *Ծածկագրված գրավոր քննությունների համակարգը չի արտացոլում ուսանողի գիտելիքները. չսովորող ուսանողը երբեմն սովորողից ավելի բարձր է ստանում /1 պատ. /:*

Ո՞ր գործոններն են ազդում ձևավորվող գնահատականի վրա

Գծապատկեր 16.



Նշում. տոկոսների հանրագումարն անցնում է 100%-ից, քանի որ այս հարցին տրվել է մեկից ավելի պատասխան:

Հարցվածների 55%-ը այն կարծիքին են, որ գնահատականի վրա ազդում են գիտելիքը կիրառելու կարողությունները, 45%-ը՝ դասաժամերին հաճախումները և 34%-ը՝ ինքնուրույն հետազոտական աշխատանքը:

Որոշ շրջանավարտներ նշել են, որ բուհում ստացած գնահատականը կախված է ուսանողի նկատմամբ դասախոսի անձնական վերաբերմունքից (23%), ուսանողի ծանոթներից (12%), ուսանողի ծնողների դիրքից (7%), ինչպես նաև կաշառքից (7%): Վերջինս հաստատվում է նաև հետևյալ հարցի վերաբերյալ ստացված պատասխաններում.

Արդյո՞ք ուսումնառության ընթացքում գումարի դիմաց, կամ բարեխոսությամբ (հովանավորչությամբ) երբևէ ստացել եք որևէ գնահատական

Գծապատկեր 17.



Ինչպե՞ս եք գնահատում ՀՖԿՍՊԻ-ում տրամադրվող հետևյալ ռեսուրսները/ծառայությունները

Գծապատկեր 18.



Նշված ռեսուրսներից/ծառայություններից առավել մեծ գնահատականների են արժանացել (հարցված շրջանավարտների կողմից) «լսարանների վիճակը» և «կահավորանքը» և «համացանցի մատչելիությունը» բուհում («լավ» կամ «գերազանց» են գնահատվել շուրջ 63%-ի կողմից), իսկ համեմատաբար ցածր է գնահատվել «ուսումնական լաբորատորիաների հագեցվածությունը սարքավորումներով» պատասխանը:

Արդյո՞ք ՀՖԿՍՊԻ-ն տրամադրում է միջազգային գործընկեր բուհերի հետ համագործակցային ծրագրեր իրականացնելու հնարավորություններ (վերապատրաստման դասընթացներ, փորձի փոխանակման միջազգային ծրագրեր և այլն):

Գծապատկեր 19.



Խորհուրդ կտա՞ք Ձեր մերձավորներին և ընկերներին ընդունվել ՀՖԿՍՊԻ
Գծապատկեր 20.



Այն փաստը, որ շրջանավարտների 87%-ը նշել է, որ խորհուրդ կտան իրենց մերձավորներին և ընկերներին ընդունվել ՀՖԿՍՊԻ, խոսում է այն մասին, որ ներկայիս շրջանավարտների մոտ բավականին բարձր է գոհունակությունը ինստիտուտի տրամադրած կրթությունից:

Նշե՞ք խնդրեմ Ձեր մերձավորներին և ընկերներին ՀՖԿՍՊԻ ընդունվելու խորհուրդ տալու կամ չտալու պատճառները:

Նրանք, ովքեր պատասխանել են, որ «*միանշանակ խորհուրդ կտան*», հավելել են հետևյալը
.

- Խորհուրդ կտամ, որովհետև կյանքիս 5 տարիները այստեղ անտեղի չեն անցել և ամենահիանալի օրերը անկացրել եմ այստեղ:
- Քանի որ այլ բուհերից տարբերվող ու անընդհատ զարգանալու տեղ ունեցող բուհ է:
- Քանի որ շատ լավ բարեփոխումներ են տեղի ունեցել: Կրկին պատրաստ եմ ընդունվել այս բուհը՝ նոր կրթական ծրագրով սովորելու համար: Շնորհակալություն:
- Բարձր գիտելիքներով դասախոսներ են և շատ բարձր մակարդակով կրթություն են տալիս:
- Բուհում կա բանիմաց դասախոսական կազմ և լավ ծրագիր:
- Խորհուրդ կտամ, բայց ոչ բոլոր մասնագիտություններով:
- ՀՖԿՍՊԻ-ն Հայաստանում սպորտի և ֆիզիկական վերականգնման մասնագիտական խորը, համակարգային և պորֆեսիոնալ գիտելիքներ փոխանցող միակ բուհն է ինձ համար: ՀՖԿՍՊԻ պրոֆեսորասախոսական կազմը տիրապետում է բացառիկ մասնագիտական գիտելիքների և այդ գիտելիքները լիարժեք փոխանցելու հմտությունների:
- ՀՖԿՍՊԻ–ում տիրող միջավայրը անփոխարինելի է, քանի որ մեծամասնությունը մարզիկներ են:
- Մարզաձևերին ավելի լավ տիրապետելու համար:
- Նույնը կցանկանաի հաջորդ սերունդներին:
- Քանի որ այս բուհում կարող եք ստանալ անհարաժեշտ գիտելիքներ ՖԿ և սպորտի ոլորտից:
- Քանի որ մեզ մոտ տրվում են ոչ միայն գիտելիքներ, այլ նաև՝ ինչպես ապրել: Բացի դրանից միայն մեզ մոտ է առկա սպորտային մթնոլորտ:

- Քանի որ պետական բուհ է, դասախոսներն էլ շատ բանիմաց և զիջող են:
- ՖԿ և սպորտի միակ բուհը լինելու համար:
- Բուհը տալիս է բավարար գիտելիքներ:
- Ես ստացել եմ անհրաժեշտ գիտելիքներ և նույնը կցանկանամ հաջորդ սերնդին:
- ժամանակակից կրթություն ստանալու համար:
- Քանի որ ցանկության դեպքում հնարավորություն կունենան լավ գիտելիքներ ստանալ:

Նրանք, ովքեր ասել են, որ *հավանաբար խորհուրդ կտան*, հավելել են.

- Ոչ ստանդարտ առարկաների (բասկետբոլ, վոլեյբոլ, ֆուտբոլ և այլն) շնորհիվ հաճույքով եմ հաճախել դասերին:
- Ուսուցման համակարգում թերություններ կան:
- Եթե նա ուզում է կոնկրետ սպորտի ոլորտում աշխատի՝ խորհուրդ կտամ:
- Հետաքրքիր մասնագիտություն գտնելու համար:
- Օբյեկտիվորեն ներկայացնելով բուհի առավելություններն ու բաց կողմերը,ընտրությունը թողնում եմ դիմորդին:
- ֆիզիոթերապիայի գիտելիք ստանալու համար:
- Եթե ունենան սպորտային գործունեություն, բնականաբար խորհուրդ կտամ ավելի բարելավել սեփական ունակությունները:
- Եթե սերը սպորտի հանդեպ մեծ է՝ միանշանակ խորհուրդ կտամ, եթե ոչ՝ կարելի է նաև այլ համալսարանում սովորել:
- Եթե ցանկանում են դառնալ մարզիչ–մանկավարժ, ֆիզիկական թերապիստ՝ ապա ԱՅՈ, լավ բուհ է:
- Կինեզիոլոգիա մասնագիտությունը մեր ժամանակների ամենապահանջված մասնագիտությունն է՝ ելնելով երկրի վիճակից և մարդկանց առողջական վիճակից:
- Կրթություն ստանալու լավ հնարավորություն կա այստեղ:
- Հատկապես սպորտով զբաղվողներին խորհուրդ կտամ այս բուհը ընդունվեն, որ ավելի լավ մասնագիտանան և հետո իրենց սիրելի մասնագիտությամբ էլ աշխատեն:
- Ունենք լավ դասախոսներ և պետական բուհ ենք:
- Քանի որ այստեղ կրթության ձևը այլ է:
- Ստանում ես նորմալ գիտելիքներ:

Նրանք, ովքեր ասել են, որ *հավանաբար/միանշանակ խորհուրդ չեն տա*, կամ՝ *կդժվարանան խորհուրդ տալ*, ավելացրել են հետևյալը.

- Գործնական աշխատանքի կիրառումը ցավոք բուհում իչ է /2/
- Քանի որ չկա արդար կրթական ծրագիր:
- Եթե դրական փոփոխություններ լինելու են՝ խորհուրդ կտամ, եթե ոչ, ապա կարծում եմ չեմ ցանկանա ընկերներս կորցնեն իրենց ժամանակը և խորհուրդ կտամ զբաղվել ինքնակրթությամբ:
- Առկա են շատ մեծ կառուցվածքային խնդիրներ:

Եթե Ձեզ առիթ ընձեռնվեր, ապա ի՞նչը կփոխեիք ՀՖԿՍՊԻ-ում, որպեսզի ուսանողներին հնարավորություն տրվեր ստանալու գործնական և կիրառական հմտություններ:

Կբարելավեի շրջանավարտների աշխատանքի տեղավորման ուղղորդման աշխատանքները	46%
Կվերանայեի մասնագիտական առարկաների ծրագրերը՝ տալով դրանց ավելի շատ գործնական ուղղվածություն	37%
Կակտիվացնեի համագործակցությունը արտերկրի բուհերի հետ	35%
Առավել կսերտացնեի կապը այլ ուսումնական հաստատությունների հետ	31%
Առավել նպատակային կդարձնեի համագործակցությունը գործատուների հետ	27%
Կներդնեի կրթության խրախուսման նոր ձևեր	26%
Կավելացնեի մասնագիտությունների և մասնագիտացումների ցանկը	20%
Կբարձրացնեի սովորողներին գիտական աշխատանքում ներգրավելու աստիճանը	20%
Կփոխեի գիտելիքների գնահատման համակարգը՝ ավելի շատ կիրառելով բանավոր քննությունների և ստուգարքների համակարգը	12%
Կփոխեի գիտելիքների գնահատման համակարգը՝ ավելի շատ կիրառելով թեստային համակարգը	11%
Կփոխեի գիտելիքների գնահատման համակարգը՝ ավելի շատ կիրառելով գրավոր միջանկյալ քննությունների և մասնագիտացումների ցանկը	10%

<u>Նշում.</u> տոկոսների հանրագումարն անցնում է 100%-ից, քանի որ այս հարցին տրվել է մեկից ավելի պատասխան:

Ինչպես երևում է վերջին հարցի վերաբերյալ շրջանավարտների պատասխաններից, վերջիններիս առավել մտահոգող խնդիրներից են՝

- ✓ շրջանավարտների աշխատանքի տեղավորման խնդիրը,
- ✓ մասնագիտական կրթության մեջ պրակտիկ, գործնական ուղղվածության պակասը,
- ✓ արտերկրի բուհերի հետ համագործակցության հնարավորությունների պակասը և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի 2020-2021թթ. ուստարվա շրջանավարտների շրջանում անցկացված հարցումները ցույց տվեցին, որ.

- ✓ ՀՖԿՍՊԻ ընդունվելու հիմնական դրդապատճառը եղել է այն, որ սովորողները ցանկացել են ստանալ սպորտի և ֆիզիկական կուլտուրայի ոլորտում բարձրագույն կրթություն և համապատասխան սպորտային կարիերայի հնարավորություններ հանրապետության միակ բուհում , որն առաջարկում է այդպիսի կրթական ծրագրեր:
- ✓ Շրջանավարտների գերակշիռ մասը՝ 79%-ը բարձր են գնահատում ՀՖԿՍՊԻ-ում առաջարկվող դասընթացների օգտակարությունը մասնագիտական գործունեության մեջ: Մենեջմենթ/մարքեթինգ և սպորտային հոգեբանություն կրթական ծրագրերի շրջանավարտների կողմից տրվել է առավել բարձր գնահատական, մինչդեռ լրագրողների և կինեզիոլոգների կողմից տրվել են ավելի ցածր գնահատականներ մասնագիտական գործունեության մեջ բուհում առաջարկվող դասընթացների օգտակարության վերաբերյալ:
- ✓ Գործնական աշխատանքները/սեմինարները և համապատասխան մասնագիտական պրակտիկան թերի են եղել ներկայիս շրջանավարտների մոտ, ոմանք էլ գանգատվել են մասնագիտական առարկաների ժամաքանակի, ինչպես նաև մասնագիտական գրականության պակասից:
- ✓ Հարցված բոլոր 4 սպորտային հոգեբանները (100%), մենեջմենթ/մարքեթինգ մասնագիտությամբ հարցված շրջանավարտների 93%-ը, մարզիչ մասնագիտությամբ շրջանավարտների 83%-ը, սպորտային մանկավարժություն մասնագիտությամբ շրջանավարտների 78%-ը *շատ արհեստավարժ* են համարում իրենց դասավանդած դասախոսներին: Ինչ վերաբերում է «կինեզիոլոգիա» և «մարզական լրագրություն» մասնագիտություններին՝ այստեղ համեմատաբար քիչ շրջանավարտներ են համարում, որ իրենց դասավանդած դասախոսները *արհեստավարժ* են եղել (համապատասխանաբար՝ 63% և 45%):
- ✓ Սպորտային հոգեբաններն (75%) ու մարզիչ-մանկավարժներն (54-60%) առավել վստահ են բուհում ստացած գիտելիքներով աշխատանք գտնելու հարցում, մինդեռ կինեզիոլոգների միայն 19%-ը, մենեջմենթ/մարքեթինգ կրթական ծրագրերի շրջանավարտների 20%-ը և մարզական լրագրողների 36%-ն է բուհում ստացած գիտելիքները *լիովին բավարար* համարում ինստիտուտը ավարտելուց հետո համապատասխան գործատուի մոտ մասնագիտական աշխատանքի անցնելու համար:
- ✓ Շրջանավարտների գրեթե 67%-ը համարում են, որ ՀՖԿՍՊԻ-ն ավարտելուց հետո համապատասխան գործատուի մոտ աշխատելու համար լրացուցիչ վերապատրաստման կարիք ունեն: Մարզիչ-մանկավարժներն առավել վստահ են բուհում ստացած գիտելիքներով աշխատանք գտնելու հարցում:

- ✓ ՀՖԿՍՊԻ-ում օտար լեզուների՝ անգլերենի և ռուսերենի ուսուցման արդյունավետությունը շրջանավարտները միջին հաշվով, 1-5 բալանոց սանդղակով գնահատել են 3. 6 միավոր, այսինքն՝ միջինից-լավ:Վերջինս, համակարգչային գիտելիքների հետ մեկտեղ, նույնպես մեծ ազդեցություն ունի շրջանավարտների շրջանում մասնագիտական աշխատանք գտնելու հնարավորության վրա (հատկապես սպորտի կառավարիչների/մարքեթոլոգների և մարզական լրագրողների համար):
- ✓ Միջին հաշվով, ՀՖԿՍՊԻ-ում ստացած իրենց կրթությունը «լավ» կամ «գերազանց» են գնահատել այս տարվա շրջանավարտների 80%-ը: Առավել ցածր են գնահատել այդ կրթությունը մարզական լրագրողներն ու կինեզիոլոգները (64% և 69% համապատասխանաբար), իսկ առավել բարձր՝ սպորտային հոգեբանները (100%), մարզիչները (84%), մանկավարժներն ու սպորտի կառավարիչ/մարքեթոլոգները (82%):
- ✓ Չնայած բուհում ուսանողների գիտելիքների գնահատման օբյեկտիվությունը բարձր է գնահատել շրջանավարտների 70%-ը, մնացած 30%-ի պատասխանները այս հարցի շուրջ (հատկապես կինեզիոլոգների կողմից)բավականին մտահոգիչ են:
- ✓ Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ կան շրջանավարտներ, ովքեր նշել են, որ ՀՖԿՍՊԻ-ում ստացած գնահատականը կախված է ուսանողի նկատմամբ դասախոսի անձնական վերաբերմունքից (23%), ուսանողի ծանոթներից (12%), ուսանողի ծնողների դիրքից (7%), ինչպես նաև կաշառքից (7%):
- ✓ Հարցվածների 17%-ը նշել է, որ իրենց ուսումնառության ընթացքում գումարի դիմաց, կամ՝ բարեխոսությամբ (հովանավորչությամբ) *հաճախ, կամ երբեմն* ստացել են գնահատականներ: 7%-ը *հազվադեպ* է այդ քայլին դիմել, իսկ 74%-ը՝ երբեք չի գնացել այդ քայլին:
- ✓ Հարցվածները իրենց մտահոգությունն են հայտնել նաև շրջանավարտների աշխատանքի տեղավորման, բուհում մասնագիտական կրթության մեջ պրակտիկ, գործնական ուղղվածության, արտերկրի համալսարանների հետ համագործակցության հնարավորությունների պակասի, ինչպես նաև մի շարք այլ խնդիրների մասին:
- ✓ Չնայած վերը նշված խնդիրներին, հարցված շրջանավարտների 87%-ը նշել է, որ խորհուրդ կտան իրենց մերձավորներին և ընկերներին ընդունվել ՀՖԿՍՊԻ: Սա փաստում է այն մասին, որ ներկայիս շրջանավարտների մոտ բավականին բարձր է գոհունակությունը ՀՖԿՍՊԻ տրամադրած կրթությունից:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ✓ Քանի որ մարզական լրագրողների և կինեզիոլոգների կողմից համեմատաբար ցածր գնահատականներ են տրվել մասնագիտական գործունեության մեջ բուհում առաջարկվող դասընթացների օգտակարության վերաբերյալ, ուստի, առաջարկում ենք համապատասխան ամբիոնների վարիչներին և ՀՖԿՍՊԻ ղեկավարությանը

վերանայել մարզական լրագրողների և կինեզիոլոգների ուսումնական ծրագրերը՝ վերջիններիս տալով ավելի պրակտիկ ուղղվածություն:

- ✓ Հարկ է նաև նշել, որ քանի որ «կինեզիոլոգիա» և «մարզական լրագրություն» մասնագիտություններով համեմատաբար քիչ շրջանավարտներ են համարում, որ իրենց դասավանդած դասախոսները *արհեստավարժ* են եղել (63% և 45% համապատասխանաբար), ուստի՝ համապատասխան ամբիոնների վարիչներին և բուհի ղեկավարությանը առաջարկում ենք նշված ամբիոնները համալրել առավել արհեստավարժ պրոֆեսորադասախոսական կազմով:
- ✓ Առաջարկում ենք ավելացնել մասնագիտական առարկաների դասավանդման, գործնական աշխատանքների/սեմինարների ժամաքանակը, ինչպես նաև ուսանողների համար հասանելի դարձնել ժամանակակից մասնագիտական գրականությունը:
- ✓ Քանի որ կինեզիոլոգների միայն 19%-ը, մենեջմենթ/մարքեթինգ մասնագիտությամբ սովորողների 20%-ը և մարզական լրագրողների 36%-ն է բուհում ստացած գիտելիքները *լիովին բավարար* համարում այն ավարտելուց հետո համապատասխան գործատուի մոտ մասնագիտական աշխատանքի անցնելու համար, ուստի համապատասխան ամբիոնների վարիչներին և ինստիտուտի ղեկավարությանը առաջարկում ենք վերանայել նշված մասնագիտությունների ուսումնական ծրագրերը՝ տալով դրանց ավելի գործնական նշանակություն, ինչպես նաև զարգացնել համագործակցությունը համապատասխան գործատուների հետ՝ առավել երկար և արդյունավետ մասնագիտական պրակտիկայի անցկացման համար: Պրակտիկայի *գիտահետազոտական* բաղադրիչը պետք է փոխարիինել *մասնագիտական* պրակտիկայով, որը հնարավորություն կտա ուսանողներին ոչ թե իրականացնելու հետազոտական աշխատանք պրակտիկայի վայրում, այլ՝ այնտեղ ձեռք բերելու իրենց մասնագիտությունների գծով գործնական հմտություններ, որոնք օգտակար կլինեն բուհն ավարտելուց հետո այդ մասնագիտությամբ աշխատանք գտնելու համար:
- ✓ Պետք է հատուկ ուշադրություն դարձնել ուսանողների գիտելիքների գնահատման օբյեկտիվության բարձրացման վրա (հատկապես կինեզիոլոգների շրջանում): Պետք է լիովին բացառել բարեխոսությամբ (հովանավորչությամբ) կամ կաշառքի դիմաց որևէ գնահատական ստանալու երևույթները, կիրառել օբյեկտիվ գնահատման ժամանակակից մեթոդներ/թեստեր, որոնք հնարավորինս կնվազեցնեն մարդկային գործոնի դերը վերը նշված գործընթացում:

Հավելված 1

ՀՖԿՍՊԻ շրջանավարտների հարցում 2021

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը (ՀՖԿՍՊԻ), նպատակ ունենալով շարունակաբար բարելավել կրթության որակն ու մատուցվող կրթական ծառայությունները, կարևորում է իր շրջանավարտների կարծիքը տվյալ գործընթացում: Ակնկալում ենք Ձեր անկեղծ մասնակցությունը և օժանդակությունը այս անանուն հարցմանը:

1. 1. Ձեր սեռը

Mark only one oval.

- արական
- իգական

2. 2. Ո՞ր ֆակուլտետում եք սովորել

Mark only one oval.

- Առողջ. տեխնոլոգ., սպորտային տուրիզմի և կառավարման
- Մարզչամանկավարժական

3. 3. Ձեր ուսուցման համակարգը

Mark only one oval.

- Բակալավրիատ - առկա
- Բակալավրիատ - հեռակա
- Մագիստրատուրա - առկա
- Մագիստրատուրա - հեռակա

4. 4. Ի՞նչ որակավորում եք ստացել ՀՖԿՍՊԻ-ում.

Mark only one oval.

- կինեզիոլոգ
- լրագրող
- մարզիչ
- մանկավարժ
- սպորտային հոգեբան
- Մենեջմենթ/մարքեթինգ

5. 5. Ինչու՞ եք ընտրել այս ԲՈՒՀ-ը և Ձեր մասնագիտությունը /նշեք համապատասխան տարբերակները/

Check all that apply.

- [ ] 1) Ինձ հետաքրքրող մասնագիտությունը միայն այստեղ կար
- [ ] 2) Պետական բուհ է
- [ ] 3) Ուսման վարձը մատչելի էր
- [ ] 4) Հեշտ էր այստեղ ընդունվել
- [ ] 5) Կրթության որակն այստեղ բարձր է
- [ ] 6) ԲՈՒՀ-ում սովորելը հնարավորություն է տալիս հետագայում մասնագիտությամբ աշխատանք գտնել
- [ ] 7) Տվյալ մասնագիտությունը ապահովում է բարձր աշխատավարձ
- [ ] 8) Դիպլոմ ստանալու համար
- [ ] 9) Ցանկացել եմ երկրորդ մասնագիտական կրթություն ստանալ
- [ ] Այլ պատասխան /նշեք ստորև/

6. Այլ պատասխան

_____

7. 6. Ինչպե՞ս կգնահատեիք ԲՈՒՀ-ում առաջարկվող դասընթացների օգտակարությունը մասնագիտական գործունեության մեջ

Mark only one oval.

- գերազանց
- լավ
- բավարար
- անբավարար

8. 7. Ինստիտուտում ուսումնառությունը նպաստու՞մ է մասնագիտական կարողությունների և գործնական հմտությունների ձեռքբերմանը

Mark only one oval.

- Այո, շատ է նպաստում
- Այո, որոշ չափով նպաստում է
- Ոչ, չի նպաստում /անցեք ՀԱՐՑ 9-ին/
- Դժվարանում եմ պատասխանել /անցեք ՀԱՐՑ 9-ին/

9. 8. Եթե ԱՅՈ, ասացեք խնդրեմ՝ ինչպիսի՞ մասնագիտական կարողություններ և գործնական հմտություններ եք ձեռք բերել ԲՈՒՀ-ում սովորելու արդյունքում.

_____
_____
_____
_____
_____

10. 9. Մասնագիտական կրթական ծրագիրը հագեցվա՞ծ էր մասնագիտական դասընթացներով

Mark only one oval.

- Այո, շատ /անցեք ՀԱՐՑ 11-ին/
- Այո, որոշ չափով
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

11. 10. Եթե ոչ, կամ որոշ չափով, ապա ի՞նչն էր պակասում

12. 11. Ձեզ դասավանդող դասախոսներն արհեստավա՞րժ էին:

Mark only one oval.

- Այո, շատ
- Այո, որոշ չափով
- Ոչ

13. 12. ՀՖԿՍՊԻ-ում ստացած գիտելիքները բավարա՞ր են այն ավարտելուց հետո համապատասխան գործատուի մոտ ըստ մասնագիտության աշխատանքի անցնելու համար

Mark only one oval.

- Այո, լիովին
- Այո, որոշ չափով
- Ոչ, բոլորովին
- Դժվարանում եմ պատասխանել
- Այլ պատասխան /նշեք ստորև/

14. Այլ պատասխան

_____

15. 13. Համապատասխան գործատուի մոտ աշխատելու համար լրացուցիչ վերապատրաստման կարիք կա՞ արդյոք:

Mark only one oval.

- Այո, շատ
- Այո, որոշ չափով
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել
- Այլ պատասխան /նշեք ստորև/

16. Այլ պատասխան

_____

17. 14. Որքանո՞վ է արդյունավետ Ինստիտուտում օտար լեզուների ուսուցումը.

Mark only one oval.

	1	2	3	4	5	
Բոլորովին արդյունավետ չի	◯	◯	◯	◯	◯	Շատ արդյունավետ է

18. 15. Ինչպե՞ս եք գնահատում ԲՈՒՀ-ում կրթության մեջ ժամանակակից տեխնիկական ռեսուրսներով (օրինակ՝ ինտերակտիվ լսարաններով) ապահովվածության մակարդակը

Mark only one oval.

- ◯ Գերազանց
- ◯ Լավ
- ◯ Բավարար
- ◯ Անբավարար

19. 16. Ընդհանուր առմամբ ինչպե՞ս եք գնահատում ՀՖԿՍՊԻ-ում Ձեր ստացած կրթությունը

Mark only one oval.

- ◯ Գերազանց
- ◯ Լավ
- ◯ Բավարար
- ◯ Անբավարար

20. 17. Ինչպե՞ս եք գնահատում արտերկրում կրթությունը շարունակելու ԲՈՒՀ-ում տրամադրվող հնարավորությունները (միջազգային շարժունության ծրագրերի իրականացում)

Mark only one oval.

- Գերազանց
- Լավ
- Բավարար
- Անբավարար

21. 18. Ուսանողների գիտելիքներն օբյեկտի՞վ են գնահատվում

Mark only one oval.

- Այո, միշտ
- Մեծամասամբ ԱՅՈ
- Երբեմն ԱՅՈ, երբեմն ՈՉ
- Ոչ, երբեք
- Դժվարանաում եմ պատասխանել

22. 19.Ձեր կարծիքով ծածկագրված գրավոր քննությունների համակարգը՝

Check all that apply.

- [ ] Օբյեկտիվ է ու թափանցիկ
- [ ] Նպաստում է արդար ու անաչառ գնահատմանը
- [ ] Մոտիվացնում է սովորելու համար
- [ ] Քիչ ազդեցություն է ունենում կրթության որակի վրա
- [ ] Այլ պատասխան /նշեք ստորև/

23. Այլ պատասխան

24. 20. Ձեր կարծիքով ո՞ր գործոններն են ազդում ձևավորվող գնահատականի վրա /նշեք համապատասխան տարբերակները/

Check all that apply.

- [ ] Գիտելիքը կիրառելու կարողությունները
- [ ] Ինքնուրույն հետազոտական աշխատանքը
- [ ] Հաճախումները դասաժամերին
- [ ] Ուսանողի նկատմամբ դասախոսի անձնական վերաբերմունքը
- [ ] Ուսանողի ծանոթը
- [ ] Ծնողների դիրքը
- [ ] Կաշառքը
- [ ] Այլ պատասխան /նշեք ստորև/

25. Այլ պատասխան

26. 21. Ուսումնառության ընթացքում գումարի դիմաց, կամ բարեխոսությամբ (հովանավորչությամբ) երբևէ ստացե՞լ եք որևէ գնահատական

Mark only one oval.

- ( ) Այո, հաճախ
- ( ) Այո, երբեմն
- ( ) Հազվադեպ /մեկ-երկու դեպքում/
- ( ) Ոչ, երբեք

27. 22. Ինչպե՞ս եք գնահատում ԲՈՒՀ-ի հետևյալ ռեսուրսային պայմանները.

Check all that apply.

	Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար
1) Լսարանների վիճակը և կահավորանքը	☐	☐	☐	☐
2) Ուսումնական լաբորատորիաների հագեցվածությունը սարքավորումներով	☐	☐	☐	☐
3) Ինստիտուտի համակարգչային սրահների վիճակը, կահավորանքը և մատչելիությունը	☐	☐	☐	☐
4) Համացանցի մատչելիությունը ԲՈՒՀ-ում	☐	☐	☐	☐
5) Ինստիտուտի կարիերայի կենտրոնի գործունեությունը	☐	☐	☐	☐

28. 23. ԲՈՒՀ-ը տրամադրու՞մ է միջազգային գործընկեր ԲՈՒՀ-երի հետ համագործակցային ծրագրեր իրականացնելու հնարավորություններ (վերապատրաստման դասընթացներ, փորձի փոխանակման միջազգային ծրագրեր և այլն)

Mark only one oval.

- Այո, շատ
- Այո, որոշ չափով
- Ոչ, երբեք
- Դժվարանում եմ պատասխանել

29. 24. Խորհուրդ կտա՞ք Ձեր մերձավորներին և ընկերներին ընդունվել ՀՖԿՍՊԻ

Mark only one oval.

- ԱՅՈ, միանշանակ
- Հավանաբար ԱՅՈ
- Հավանաբար ՈՉ
- Միանշանակ ՈՉ
- Դժվարանում եմ պատասխանել

30. 25. Ինչո՞ւ

_____

31. 26.Եթե հնարավորություն ունենայիք, ապա ի՞նչը կփոխեիք ԲՈՒՀ-ում, որպեսզի ուսանողներին հնարավորություն տրվի ստանալու գործնական և կիրառական հմտություններ /նշեք համապատասխան տարբերակները/

Check all that apply.

- [ ] Կվերանայեի մասնագիտական առարկաների ծրագրերը՝ տալով դրանց ավելի շատ գործնական ուղղվածություն
- [ ] Կներդնեի կրթության խրախուսման նոր ձևեր
- [ ] Կավելացնեի մասնագիտությունների և մասնագիտացումների ցանկը
- [ ] Կփոխեի գիտելիքների գնահատման համակարգը՝ ավելի շատ կիրառելով թեստային համակարգը
- [ ] Կփոխեի գիտելիքների գնահատման համակարգը՝ ավելի շատ կիրառելով գրավոր միջանկյալ քննությունների և մասնագիտացումների ցանկը
- [ ] Կփոխեի գիտելիքների գնահատման համակարգը՝ ավելի շատ կիրառելով բանավոր քննությունների և ստուգարքների համակարգը
- [ ] Կբարձրացնեի սովորողներին գիտական աշխատանքում ներգրավելու աստիճանը
- [ ] Առավել նպատակային կդարձնեի համագործակցությունը գործատուների հետ
- [ ] Առավել կսերտացնեի կապը այլ ուսումնական հաստատությունների հետ
- [ ] Կբարելավեի շրջանավարտների աշխատանքի տեղավորման ուղղորդման աշխատանքները
- [ ] Կակտիվացնեի համագործակցությունը արտերկրի բուհերի հետ
- [ ] Այլ պատասխան /նշել ստորև/

32. Այլ պատասխան

This content is neither created nor endorsed by Google.

Google Forms